ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/74 « 30 » 01 2020թ.

Ձեր

«Դերձակ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00885285)
տնօրեն Լ.Գրիգորյանին
ք. Երևան, Ավան Քուչակի 16/2
էլ. հասցե՝ derzak2013@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 28.06.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Դերձակ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, այն պարագայում, երբ վերը նշված պայմանագրի շրջանակներում մատակարարի հետ 29.07.2019թ.ին կնքվել է համաձայնագիր, որով երկարաձգվել է պայմանագրի շրջանակներում մատակարարման ենթակա ապրանքների ժամկետները 30 օրացուցային օրով:

Մասնավորապես մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 100 հատ թիկնոց /թիկնոց-ուսնոց/, 350 հատ արտացոլող բաճկոնակներ, սակայն մատակարարում ընդհանրապես չի իրականացվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի պահանջների համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 28.06.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-57/2» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից, իսկ «Դերձակ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո, հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 500005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել՝ Պայմանագրի 6.2-րդ կետով հաշվարկված գումարը՝ 130 687.5 /մեկ հարյուր երեսուն հազար վեց հարյուր ութսունյոթ դրամ 50 լումա/ ՀՀ դրամ:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 331 500 /երեք հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Դերձակ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Ոստիկանության գնդապետ **Ա.Ներսիսյան**

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 010 59 60 39